**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 08.02.2018թ. ժամը 12.00

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Վ. Ավետիսյանը

**Անդամներ՝**
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Ս. Դավթյանը
Վ. Հակոբյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝
Ա. Համբարձումյանը

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ/ Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 2018թ. փետրվարի 5-ին հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի «Նյու ինդաստրիզ» ՍՊ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:

1.2 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ հայտերի գնահատման նպատակով նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով:

Նիստը տեղի է ունեցել 12.02.2018թ. ժամը 12.00-ին :

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ ս. թ. փետրվարի 9-ին Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի «Նյու ինդաստրիզ» ՍՊ նկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հանձնաժողովի կողմից ներկայացված թիվ 1 գնահատման թերթիկները /կցվում են/ «ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Նյու ինդաստրիզ» ՍՊ ընկերությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

3.3 Ամփոփման նիստը հրավիրել պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Վ. Ավետիսյան
անդամներ՝ ____________ Ս. Դավթյան
____________ Վ. Հակոբյան
____________ Ա. Համբարձումյան
քարտուղար՝ ____________ Մ. Նիկոլյան